

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2015թ. 1-ին եռամսյակում կատարած աշխատանքների

Կրթություն

- Կազմակերպվել և անցկացվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Այդ նպատակով մարզպետի որոշմամբ հաստատվել է մարզային փուլի անցկացման կազմկոմիտեն և առարկայական հանձնաժողովները: ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան անցկացվել է մարզային փուլը, որին դպրոցներից ներկայացված հայտերի համաձայն մասնակցել է 583 աշակերտ: Առարկայական հանձնաժողովները սահմանված ժամկետում ստուգել, գնահատել են գրավոր աշխատանքները, որոնց հիման վրա կազմել են հանրապետական փուլի 52 մասնակիցների հայտերը: Հայտերը սահմանված ժամկետում ներկայացվել է կրթության և գիտության նախարարություն:
- Դպրոցներից ստացված տվյալների հիման վրա վարչությունում բացված գրանցամատյանում լրացվել է մարզում աշակերտների շարժը (տեղափոխություն մարզի ներսում դպրոցից դպրոց, մարզից դուրս եկող և այլ մարզերից եկող աշակերտներ, արտերկիր մեկնող ու վերադարձող աշակերտներ):
- Դպրոցներից հավաքվել և վարչությունում ստուգվել է վերջին 3 տարիներին ուսուցչի թափուր տեղի համար անցկացված մրցույթների փաթեթներում ընդգրկված փաստաթղթերի համապատասխանությունը սահմանված կարգին և հաղթողների տվյալները գրանցվել են գրանցամատյանում:
- Հանրակրթական դպրոցների տնօրենների հետ համագործակցելով նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել <Ամենախելացին> հեռուստամրցույթի ընտրական փուլը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:
- Կազմակերպվել է 2014-2015 ուստարվա շրջանավարտների միասնական քննությունների մասնակցության դիմում-հայտերի ընդունումը և ներկայացումը գնահատման և թեստավորման կենտրոն:
- Ստացվել և դպրոցներին է բաշխվել 2014-2015 ուստարվա ավարտական քննությունների ուղեցույցները՝ 1 աշակերտ, 1 ուղեցույց սկզբունքով:

- Կազմվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել նախորդ՝ 2013-2014 ուստարվա շրջանավարտների ավարտական փաստաթղթերի (վկայականներ, ատեստատներ) բաշխման հաշվետվությունները:
- Ընթացիկ ուսումնական տարվա շրջանավարտների ատեստատները լրացնելու համար դպրոցներից ստացված շրջանավարտների ցուցակները ներկայացվել են ՀՀ կրթության և գիտության նախարարություն, էլեկտրոնային եղանակով:
- Դպրոցներից հավաքվել ամփոփվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել եկող ուսումնական տարվա դասագրքերի նախնական պատվերը:
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, ՀՀ կրթության և գիտության նախարարություններ են ներկայացվել մարզում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասին տվյալներ:
- Անցկացվել է <Հիշում եմ և պահանջում>, <Մեր համատեղ հաղթանակը> թեմաներով շարադրությունների մրցույթները և ընտրված լավագույն 10 աշխատանքները ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն:
- Անցկացվել է <Անտարես> հրատարակչության կողմից 6-րդ դասարանցիների համար հայտարարված ընթերցանության մրցույթի մարզային փուլը, հաղթող և հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած 3 աշակերտների տվյալները ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն սահմանված կարգով:
- Ժամանակին և սահմանված կարգով՝ էլեկտրոնային եղանակով, կատարվել են մարզպետի, աշխատակազմի ղեկավարի կողմից տրված հանձնարարականները:

Մշակույթ և սպորտ

- Անցկացվել է միջոցառում նվիրված բանակի կազմավորման 23 ամյակին, Եղեգնաձորի և Վայքի երաժշտական դպրոցների սաների մասնակցությամբ:
- Կազմվել և հաստատման է ներկայացվել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների ծրագիրը:
- Կազմակերպվել է դպրոցականների շախմատի 7-րդ օլիմպիադայի տարածաշրջանային փուլը, որտեղ հաղթողները կմասնակցեն ապրիլին անցկացվող մարզային փուլին:
- Անցկացվել է <Դիպուկ հրաձիգ> մրցույթի տարածաշրջանային փուլը, որի արդյունքում հաղթող թիմերը կմասնակցեն մարզային փուլին:
- Կազմվել և հաստատման է ներկայացվել Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70 ամյակին նվիրված միջոցառումների ծրագիրը: